Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2015թ. հունվարի 26-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

2. Համալսարանում ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

3. Համալսարանը հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

2) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս.

3) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս.

4) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

5) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

6) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

7) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

8) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

9) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ՝ առնվազն 50 տոկոսի չափով.

Համալսարանի հայեցողությամբ՝

10) ՀՀ կրթության և գիտության նախարարությունում կամ Համալսարանում առնվազն հինգ տարի աշխատանքային ստաժ ունեցող հիմնական աշխատողների երեխաներին՝ մինչև 80 տոկոս.

11) Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխաներին առնվազն մինչև 50 տոկոս.

12) Վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ մինչև 50 տոկոս.

13) Երրորդ խմբի հաշմանդամ ուսանողներին մինչև 50 տոկոս.

14) մարտական գործողությունների մասնակիցների (ազատամարտիկների) երեխա-ուսանողներին՝ մինչև 50 տոկոս:

15) առանձին դեպքերում, Համալսարանի ռեկտորի հրամանով այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

5. Մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

6. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել Համալսարանի կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

7. Միջին որակական գնահատականի շեմը սահմանվում է 60: Իսկ ոչ կրեդիտային համակարգի ուսանողները կարող են օգտվել ուսման վարձի մասնակի փոխհատուցումից, եթե չունեն ակադեմիական պարտք:

8. Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

9. Վերականգնվող, այլ բուհից տեղափոխված կամ մասնագիտությունը (մասնագիտացումը) փոփոխած ուսանողները ուսման վարձի փոխհատուցման համար կարող են դիմել մեկ կիսամյակ Համալսարանում սովորելուց հետո:

10. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը: